



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 03 » մարտի 2015 թ.

N 20

ք. Ստեփանակերտ

Ա.Ս.Գրիգորյանին ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակից հանելու մասին

ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 25 առ 17.12.2010թ. հրամանով՝ ԼՂՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա (արձանագրություն N 07 առ 15.12.2010թ.), ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի դատախազության ավագ դատախազ, 1-ին դասի խորհրդական Գ.Ա.Գրիգորյանը ընդգրկված էր ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակում:

Հաշվի առնելով, որ ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 25 առ 02.03.2015թ. հրամանով Ա.Ս.Գրիգորյանը նշանակվել է ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի դատախազի տեղակալի պաշտոնին, ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասով և 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի դատախազի տեղակալ, 1-ին դասի խորհրդական Ալեքսանդր Սուրենի Գրիգորյանին հանել ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակից:

2. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին, ԼՂՀ քաղաքային դատախազներին:

3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Աղարադատության երրորդ դասի
պետական խորհրդական

Ա.Ա.Մուխյան